ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» հունիսի 2021թ. № 253

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՉՈԲԱՆՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ԼԵՎՈՆԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ԵՎ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻ ՉՈԲԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և 33-րդ կետով, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան»-ի կողմից տրված շինությունների հատակագծերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2460904 վկայականը և Արմեն Գրիգորի Չոբանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արմեն Գրիգորի Չոբանյանին, Անահիտ Լևոնի Գաբրիելյանին և Գրիգոր Արմենի Չոբանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, 6 շենք, թիվ 2» հասցեում գտնվող 113,5 քառակուսի մետր մակերեսով ոչ բնակելի տարածքից առանձնացված՝ 72,7 քառակուսի մետր մակերեսով ոչ բնակելի տարածքին տրամադրել «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց, 6 շենք, թիվ 2» հասցեն, իսկ 40,8 քառակուսի մետր մակերեսով ոչ բնակելի տարածքին տրամադրել «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց, 6 շենք, թիվ 2/1» հասցեն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված առանձին գույքային միավորների բաժանված անշարժ գույքերի հատակագծերը:

3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունիսի 2021թ. № 254

ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ, 4-րդ մասի 1-ին պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետով, նույն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06-006-0441-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,00135 հեկտար մակերեսով հողամասի վրա 2019 թվականին ինքնակամ կառուցված 12,4 քառակուսի մետր մակերեսով կիսակառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06-006-0441-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,00135 հեկտար մակերեսով այլ գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված՝ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06-006-0441-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,00135 հեկտար մակերեսով հասարակական գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 12,4 քառակուսի մետր մակերեսով կիսակառույցը ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Տեր-Սիմոնյան փողոց, թիվ 47/4» հասցեն:

5. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

6. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանին (ծնված 11.11.1962թ.) օրինականացված կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Տ Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունիսի 2021թ. № 255

ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և 33-րդ կետով, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունները, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2100219 վկայականը և Սամվել Վոլոդյայի Հակոբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սամվել Վոլոդյայի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Գործարանային թաղամասում գտնվող առանձին գույքային միավորի բաժանված 0,37384 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Գործարանային թաղամաս, թիվ 72» հասցեն, իսկ 0,18616 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Գործարանային թաղամաս, թիվ 73» հասցեն:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված առանձին գույքային միավորների բաժանված անշարժ գույքերի հատակագծերը:
3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունիսի 2021թ. № 256

QR ԿՈԴԵՐՈՎ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Սպիտակ համայնքում զբոսաշրջային տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող վայրերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության բարձրացման նպատակով նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ QR կոդերով ցուցանակների տեղադրման համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 150 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Վ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 15
ք.Սպիտակ